ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷՄԻԼ ՍԱՐԳՍԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն. Սարգսեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ձեր ազգօգուտ ու եկեղեցանպաստ գործունէութեանը եւ Ռուսաստանի Դաշնութիւնում բնակեալ հայորդեաց կեանքում Ձեր գովարժան վաստակին: Տարիներ շարունակ Դուք ազնիւ հոգով աջակից էք թեմի Հայորդյաց տան առաքելութեանը եւ Ձեր անձնական միջոցները սիրով ծառայեցնում էք համայնքի կրթական ու մշակութային նախաձեռնութիւնների իրականացմանը, որպէսզի հայրենի հողից հեռու ապրող մեր ժողովրդի զաւակների հոգիներում ապրեն ու զօրաւոր մնան ազգային ինքնութեան գիտակցութիւնը եւ սէրն ու հաւատարմութիւնը մեր նախնեաց աւանդներին:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք սրտաբուխ ընծայաբերումով աջակցեցիք նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու կառուցմանը, որը հայոց հաւատքի փառաւոր վկայութիւնն է ռուսաց հողում: Առաքինի գործերով Դուք օրինակ էք հաւատաւոր հայորդեաց համար՝ ջանք ու եռանդ բերելու մեր ժողովրդի բարօրութեանը եւ մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջ թեմակալ Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ենք հայցում՝ մաղթելով, որ Ամենախնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող ընտանեկան Ձեր յարկը միշտ շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

«Այսուհետեւ զօրացարո՛ւք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա, զիտասջի՛ք, թէ իւրաքանչիւր ոք՝ որ ինչ առնէ զբարին, զնո՛յն ընդունի ի Տեառնէ» (Եփ. Զ. 8,10):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 792